ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2020 թվականի N 359-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3 մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N98-Ն որոշման 8.2-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Բաժին 8, խումբ 2, դաս 4-ի 4239 հոդվածից 1500,0 հազար դրամը և 4269 հոդվածից 500,0 հազար դրամը տեղափոխել բաժին 6, խումբ 6, դաս 1-ի 4264 հոդված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2020 թվականի N 360-Ա

ԼԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ,ԳԱԳԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ,ՆԱՏԱԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ, ԲԵԳԼԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան

Քաղաքացիներ Լիդա Պետրոսյանը, Գագիկ Պետրոսյանը, Նատալյա Պետրոսյանը, Բեգլար Պետրոսյանը հանդիսանալով հողի հարկ վճարող սուբյեկտ, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով չեն կատարել հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2020 թվականի մայիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի գանձման հարցի քննության նպատակով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը

Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների՝ Տաշիր համայնքի Բլագոդարնոյե գյուղի տարածքում 4 տարբեր չափերի, տարբեր կարգի և նշանակության 7.633 հա ընդհանուր մակերեսով հողամասերը հանդիսանում են քաղաք Տաշիր,փողոց Երևանյան, թաղամաս 11,տուն 350 հասցեի բնակիչներ Լիդա Պետրոսյանի, Գագիկ Պետրոսյանի, Նատալյա Պետրոսյանի, Բեգլար Պետրոսյանի սեփականությունը,որոնք «Հողի Հարկի մասին» ՀՀ օրենքով համարվում են հարկվող օբյեկտ:

Հողամասերի համար վճարման ենթակա հարկը կազմում է 234.169 (երկու հարյուր երեսունչորս հազար հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ,ինչը մինչև 2020 թվականի մայիս ամիսը չի վճարվել:

Քաղաքացիներ Լիդա Պետրոսյանի, Գագիկ Պետրոսյանի, Նատալյա Պետրոսյանի, Բեգլար Պետրոսյանի հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 179.279(հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝

ապառք,որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 54.890 (հիսունչորս հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամի չափով:
2020 թվականի մայիսի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2020 թվականի մայիսի 27-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել և չեն ներկայացել քաղաքացիներ Լիդա Պետրոսյանը,Գագիկ Պետրոսյանը, Նատալյա Պետրոսյանը,Բեգլար Պետրոսյանը (հիմք՝ փոստային անդորրագիր 18.05.2020):
(Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված քաղաքացիներ Լիդա Պետրոսյանի, Գագիկ Պետրոսյանի, Նատալյա Պետրոսյանի, Բեգլար Պետրոսյանի բացակայությամբ):

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:
Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը,պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:
Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:
Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝հարկային վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝0.075 տոկոսի չափով:
Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին,16-րդ, ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1 . Քաղաքացիներ Լիդա Պետրոսյանից, Գագիկ Պետրոյանից, Նատալյա Պետրոսյանից,Բեգլար Պետրոսյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջե գանձել 234.169(երկու հարյուր երեսունչորս հազար հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ, որից 179.279(հարյուր յոթանասունինը հազար երկու հարյուր յոթանասունինը) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 54.890 (հիսունչորս հազար ութ հարյուր իննսուն) ՀՀ դրամ ՝ որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիրի համայնքի ղեկավարին՝ այն ստանալուց և դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է կատարման ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում.

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մայիսի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2020 թվականի N 361-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 1-ի «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին» N186-Ն հրամանով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Հայավտոկայան» ՓԲԸ-ին պատկանող, Գետափնյա փողոց, թիվ 6 հասցեում 06-008-0116-0010 կադաստրային ծածկագրով, 0.54683 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի սահմանները՝ համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի:

2.06-008-0116-0010 կադաստրային ծածկագրով, 0.54683 հա մակերեսով հողամասում, 1989թ-ին կառուցված, սակայն քարտեզագրման սխալի պատճառով իրավունքների պետական գրանցման վկայականում չարտացոլված 23.2 քմ մակերեսով պարիսպը և 17.28 քմ մակերեսով հենապատը համարել օրինական և կատարել պետական գրանցում:

3. Սույն որոշումից ծագող իրավունքները և պարտականությունները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2020 թվականի N 362-Ա

«ՄԻԼԼԿԱԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի 596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N97-Ն որոշումով հաստատված հավելված 1-ի 3-րդ կետով և հիմք ընդունելով «ՄԻԼԼԿԱԹ» ՍՊԸ-ի տնօրեն Սեդրակ Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի մայիսի 5-ի ՄԴ 171-20)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«ՄԻԼԼԿԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ անասնաշենքի քանդման թույլտվություն:
2.«ՄԻԼԼԿԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Տաշիրի համայնքապետարանի 900275081215 հաշվեհամարին մուծել 5000 (հինգ հազար) դրամ տեղական տուրք՝ քանդման թույլտվության համար:
3. Կառուցապատողը քանդման աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մայիսի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2020 թվականի N 363-Ա

ԱՐՄԵՆ ԱՐԱՄԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ԵՎ ԱՆՈՒՇ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Արամի Սուքիասյանի դիմումը (մուտք՝ 2020 թվականի մայիսի 5-ի ՄԴ 167-20)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Արմեն Արամի և Անուշ Սերյոժայի Սուքիասյաններին տալ կաթի վերամշակման արտադրամասի նախագծման թույլտվություն:
2.Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2020թ. մայիսի 27
ք.Տաշիր